ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հունիսի 2-ից մինչև սեպտեմբերի 1-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Էմմա Քյուրքչյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

Հաշվետու եռամսյակի ընթացքում իմ աշխատանքային գործունեությունն ուղղված է եղել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, սոցիալական ներառման քաղաքականության արդյունավետ իրականացմանը, ոլորտային իրավական կարգավորումների բարելավմանը, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի զարգացմանն ու շահառուների անհատական խնդիրների խորացված ուսումնասիրությանն ու դրանց պատշաճ լուծումների մշակմանը: Աշխատանքները կատարվել են նախարարության ռազմավարական ուղղություններին և բաժնի գործառույթներին համապատասխան:

1. Իրականացրել եմ հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և սոցիալ վերականգնողական ծառայությունների մատուցման վերաբերյալ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված («Աստղավարդ» ՀԿ, «Աուտիզմ ազգային հիմնադրամ» «Հույսի Մեծամոր» ՀԿ, «Լիարժեք կյանք» ՀԿ, «Փրկություն» ԲՀԿ) հաշվետվությունների ընդունման,

հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների և համապատասխան գրությունների կազմման աշխատանքներ:

2. Տեղեկատվական համակարգում նոր տեսակի աջակցող միջոցների և դրանց անվանումների ավելացման նպատակով պատրաստել և «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին ուղարկել եմ համապատասխան գրություններ:

3. Նորմատիվային փաստաթղթերի վերանայում: Մասնակցել եմ աջակցող միջոցների տրամադրման գործընթացների բարելավմանն ուղղված աշխատանքներին, այդ թվում՝ համապատասխան ցանկերի և չափորոշիչների վերանայման նախաձեռնություններին՝ ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի N 1004-Ն որոշման շրջանակներում:

4. Քաղաքացիների դիմում-բողոքների ուսումնասիրման և արձագանքման աշխատանքներ: Վերլուծվել և ուսումնասիրվել են քաղաքացիների դիմումները, տրամադրվել են անհրաժեշտ պարզաբանումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, արտոնությունների և պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ:

5. Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստվել և ուղարկվել են բազմաթիվ գրություններ տարբեր գերատեսչությունների, պետական մարմինների, տեղական և միջազգային կազմակերպությունների:

6. Շահառուների կարիքների գնահատման մասնակցություն: Իրականացվել է շահառուների կարիքների վերլուծություն և հնարավորությունների նախնական գնահատում՝ նպատակ ունենալով ապահովել ծառայությունների ավելի նպատակային ու արդյունավետ ուղղորդմանը:

7. Շարունակվել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ: Կայացել են մի շարք հանդիպումներ և քննարկումներ միջազգային

գործընկերների (մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և ներառական քաղաքականության ոլորտում ներգրավված կառույցների) հետ: Քննարկվել են բարեփոխումների ընթացքը, վիճակագրական տվյալները, ոլորտային մարտահրավերները և նորարարական լուծումները:

24.09.2025թ.

Փորձագետ՝ Էմմա Քյուրքչյան

Գնահատական եմ գրանցում
Ա. Հակոբյան